


տէր Գրիգորիսի, որ էր ահամբ և մարգարտով: * Աւետարանի զարդերի նկարագրութիւնն ու Գրիգորիս անունը շատ յարմար են գալիս մեր աւետարանին, բայց Սմբատի խօսքերն այնպէս անորոշ են, որ լիարար է հասկանալ, որ Գրիգորիսին է ակնարկում: Պատմիչն այս ձառուածում և ուրիշ տեղ անխտիր գործ է ածում Գրիգոր, Գրիգորիս անունները մի և նոյն անձի համար: Թէպէտ Ապիրատ բառն ևս գործ է ածում երկու անգամ Գրիգոր Զ-ի մասին, բայց մի անգամ ևս Գրիգորիս և Գրիգոր առանց աշխարհական անուան: Սմբատի յիշած «տէր Գրիգորիսը» այստեղ Ապիրատի հետ նոյնացնելու դէպքում, պէտք է ընդունել, որ Բակուրանի մահուանից յետոյ՝ աւետարանն անցել էր իւր նախկին տիրոջը, իսկ ապա մնացել կաթողիկոսարանում:

Երբ է այս աւետարանը էջմիածին բերուել և ի՞նչպէս, տեղեկութիւն չունինք:

Շարունակելի

Պարեգիւն վ. Յովսէփեան



Մ Ա Տ Ե Ն Ա Խ Օ Ս Ո Ի Թ Ի Ի Ն

Ա.

Հրատարակութիւն Ա. էջմիածնի.

Պատմագիրք Հայոց. հ ստր Ա. գիրք երկուրդ,

Ա.Գ.Ա.Թ.Ա.Ն.Գ.Ե.Ղ.ՈՍ

Աշխատութեամբ Գ. Տէր Մկրտչեան և Ստ. Կանայեանց, ծախիւք Տեառն Սուրբիասայ Արքեպիսկոպոսի Պարզեանց. Տպգիւ, 1909 թ. գինն է 3 ասուր.

Ազատագրողութիւնն այս վերջին հրատարակութիւնը մի հոյակապ գործ է, որ պատիւ է բերում աշխատողներին և հրատարակողին: Գրքի մէջ կան բացի առաջին 4 երես վերադասութիւններէ,

* Սմբատ Պատմիչ 104—105.

- I. Յառաջարան՝ ա—ծի, եր.
 - II. Արդի հայերէնում պակասող հատուած, կ—կզ.
 - III. Մատենագրութիւն, կզ—կէ.
 - IV. Համառօտ ցուցակ բնագրում և յառաջարանում գործածուած տառանիւնների, կը—կթ:
 - V. Բովանդակութիւն, հ—ձ.
 - VI. Բուն Ագաթանգեղոսի պատմութիւն իւր յառաջարանով, 1—133:
 - VII. Վարդապետութիւն սրբոյն Գրիգորի, 134—372:
 - VIII. Դարձ քրիստոնէ. աշխարհիս Հայաստան, 373—374:
 - IX. Ս. Գրքի, Կորինթի և Փաւստոսի վկայութիւններ ու հատուածներ Ագաթանգեղոսում, ա—ժե:
 - X. Յանկ անուանց, ժզ—իթ:
 - XI. Ուղղելիք և վրիպակք:
- Ընդ ամենը 588 երես, մեծ դիրքով, չափ մաքուր և լաւ թղթի վրայ տպուած:

Իրաւամբ «Պատմագիրք Հայոց» համարուած է հրատարակութիւն Ս. Էջմիածնի, որովհետեւ համեմատութեան գլխաւոր աղբիւրները Մայր Աթոռիս մատենադարանի ձեռագրերն են, բաղդատութիւն կատարողները՝ Մայր Աթոռի շեմարանի առաջնապետուղ սաները՝ ի դէմս միաբան Գալուստ Տ. Մկրտչեանի, Ստեփան Կանայեանի և Ստեփան Մալխասեանի: Հրատարակութիւնը կատարուել է Մայր Աթոռի միաբան և շեմարանի առաջին տեսուչ տէր Սուքիաս արքեպիսկոպոս Պարզեանցի ծախքով:

Ի պատիւ Մայր Աթոռի պէտք է ասել, որ Ագաթանգեղոսի առաջին տպագրական հրատարակութիւնն էլ, 1708—1710 թուին, Մայր Աթոռինն է, թէև Կ. Պօլսում տպուած. որովհետեւ հրատարակուած է Զուղայեցի Աղէքսանդր կաթողիկոսի ընդօրինակած ձեռագրից և նրա հրամանով: Եւ գեղեցիկ զուգագիպութեամբ, այդ Ագաթանգեղոսի Ա. տպագրութեան 200 ամեակին, նոյն Ս. Էջմիածնի հրատարակութեամբ լոյս է տեսնում Ագաթանգեղոսի ուսումնական չքեղ հրատարակութիւնը կատարուած բազմաթիւ ձեռագիր և տպագիր օրինակների բարեխիղճ բաղդատութեամբ, որով կարելի է վերահաստատուած համարել Ագաթանգեղոսի բնագիրը, այն բազմաթիւ ընթերցուածներով, որ կան լուսանցքներում և ուղղումներով, որ մտած են բնագրի մէջ:

Գիտնական աշխատողները յառաջարանի մէջ մանրամասն նկարագրել են Ագաթանգեղոսի պատմութեան տպագիր և ձեռագիր յայտնի բոլոր օրինակների հանգամանքը, մէջ բերելով և Ագաթանգեղոսի մասին մատենագրութիւնը, և գեղեցիկ լուսութիւն են

պահել Ազաթանգեղոսի ծագման մասին, երևի այն դիտաւորութեամբ, որ բանասէրները ի յաւելումն զայսօր կատարուած քննադատութիւնների, այս գիտական հրատարակութեան բազմաթիւ ընթերցումները ի նկատի ունենալով և կշռադատելով Ազաթանգեղոսի խմբաւորութիւնների տեսակները, նոր քննադատութեամբ լուսարանեն Ազաթանգեղոսի ծագման հանգամանքը:

Ազաթանգեղոսի սոյն հրատարակութեան ժամանակ բաղդատութեան համար ի նկատ են առնուած:

ա. հինգ տպագիր օրինակները, որոնցից, ինչպէս վերը ասացինք, առաջին տպագրութիւնը կատարուած է Կ. Պօլսում 1709 — 1710 թ. Ս. Էջմիածնի հրատարակութեամբ, և վերջինը Տփլիսում 1883 թուին:

բ. Նոր Հայկազեան բառգիրք, Վեննայի կրկնագիրը, Նորայր Բիւզանդացու «Կորիւն վարդապետ»:

գ. Մայր Աթոռի մատենադարանի բազմաթիւ ձեռագիր Ազաթանգեղոսներն ու Ճառքնախոսները:

դ. Սուրբ մատենադարանների ձեռագիր Ազաթանգեղոսներ, որքան հնարաւոր է կղել:

Ըստ բաղդատողների Ազաթանգեղոսի բոլոր յայտնի ձեռագրերը կարելի է բաժանել երկու մեծ խմբակցութեան. կարելի է երրորդ խմբակցութիւն համարել այն սակաւաթիւ օրինակները, որոնք իրանց ընթերցուածներով երեւում են այդ երկու մեծ խմբակցութիւնների մէջ:

Առաջին խումբը ունի ա. և բ. տպագրութեան կարճ յառաջարանը, որոնց զաւարարը կղել է Աղէքսանդր կաթողիկոս Զուղայեցու ընդօրինակածը, որ հաւանօրէն ալէքսանդրապօլսի Թագէտա Բաբայեանի ձեռագիրն է, որ այժմ գտնոււմ է Ս. Պետերբուրգի մուզէում № 4, և որը ցուցակագրել է Մեսրոպ վարդ. Տ. Մովսէսեանը (այժմ եպիսկոպոս):

Ազաթանգեղոսի ամենահին օրինակը համարոււմ է Պարիզի ձեռագիրը, որ գրուած է Հայոց ԶԳ—Փրկչական 1254 թուին: Այս ձեռագրի առանձնայատկութիւններն են ա. որ ունի ամբողջական յառաջարան, բ. որ Մասի հրատարակած արար Ազաթանգեղոսի պէս ունի Տիրիկէս և Կիրակոս եպիսկոպոսների անունները և գ. որ գրուած է Ռիմ քաղաքի Յովհաննէս և Մատթէոս աւետարանիչների տաճարի հովանու տակ, որ Հայոց հոգևտունն է կղել: Յիշատակարանը այսպէս է առաջ բերուած. «Գրեալ ի Վարդանայ քահանայէ ի Թուականիս Հայոց ԶԳ, (Փրկչական 1254) ի քաղաքին Ռիմ ընդ հովանեաւ սուրբ տաճարին, որ յանուն սուրբ աւետարանչայն Յովաննու և Մատթէոսի, որ էր նա հոգևտուն Հայոց»: Ռիմ, Հոռմն է արդեօք, եթէ Հոռմն է, այդ արդէն ապացոյց կըլինի, որ ժգ.

դարում Հայք ոչ միայն հասած են եղել Հոմ, այլ այն տեղ հին բնակիչ են եղել և հոգեւոր են ունեցել Այս հաւանական է:

Սակայն մի կէտ մեզ անբացատրելի է մնում Հոմ մեր գրականութեան և ժողովրդական լեզուի մէջ միշտ գրուել է և հռչակուել Հոմ, Հոմի: Հայերի առաջին յարարութիւնը Հոմի հետ եղել է Բիւզանդիոնի և հուսկ ուրեմն Կիլիկիան հարստութեան միջոցով: Յոյները Հոմմը Ռիմ չեն հնչում, կիլիկիացիք ևս Հոմմ և Հոմ էին գրում և ասում: Արդ Հայոց ՁԳ և Փրկչի 1254 թուին Վարդան քահանան, հնագոյն համարուած Ագաթանգեղոսի գրիչը որտեղից է առել Ռիմ: Ընդհանուր կարծիք է թէ, որովհետեւ Ալաւեան ազգերը Հոմը Ռիմ են հնչում և գրում, երեւի լեհաստանցի հայ է եղել Վարդան քահանան:

Յարգելով այդ կարծիքը, որ շատ շատերից ընդունուած է, մենք դարձեալ տարակուսում ենք, որ Վարդան քահանան Պարիզի օրինակի գրողը, գրած լինի այն Ռիմ քաղաքում և այն Հայոց 703 և Փրկչի 1254 թուին, որի մէջ Հոմն է և որ Վարդանը Լեհաստանի հայերից լինելով՝ սլաւ լեհացիների հետեւողութեամբ Հոմմը Ռիմ է կոչել:

Ըստ մեզ, եթէ գրչութեան թուականը ճիշտ է, քաղաքի առումը տարակուսելի է. ջոկ բան է, եթէ գրչութեան տեղը Սրիմ կամ Ղոբմ համարենք իսկաւ ղ սղած կամ քնջուած:

Յիրաւի ժԳ դարում և յետոյ Ղոբմում այնքան շատ հայեր կային, որ երկիրը Ծովային Հայաստան (Armenia maritima) էր կոչւում, և թերակղզու տիրապետող Գինովացոց հասարակագետութիւնը հովանաւորում է հայերին, որպէս ճարպիկ վաճառականների և հաւատարիմ քաղաքացիների: Գրուել են այն տեղ բազմաթիւ մատեաններ և կարող էր այդտեղ գրուել Հայոց ՁԳ թ. Ագաթանգեղոսը, եթէ ուղիղ է Ռիմ ընթերցուածը, և այդ կոչմամբ Հոմմ պէտք է հասկանաք, այն ժամանակ պէտք է ճշտել. ա. որ Հայոց ՁԳ այսինքն 1254 թուին Հոմմ գաղթած հայեր կային, այն էլ սլաւոնական երկրներից, իւրացրած Հոմմի Ռիմ սլաւոնական ձևը, բ. որ այդ հայերը Հոմմում հոգեւոր են ունէին և հոգեւոր բարձր այդ դարում կիրառութեան մէջ էր. գ. որ կար այն տեղ այդ ժամանակ Վարդան քահանայ:

Մինչդեռ գիտենք, որ ժե դարում, երբ Օսմանցիք տիրեցին Սրիմին, հայերի մի մասը, խուսափելով մահմեական բռնութիւնից և հրապուրուած Ռուս իշխաններից ու Լեհ թագաւորներից կամաց չարժուելով դէպ ի հիւսիս պարապում էր վաճառականութեամբ: Հայերի վերայ, որպէս յաջողակ վաճառականների վերայ դուրսգրուած էին, մահաւանդ լեհաց Վլադիսլաւ ա. թագաւորը, որ 1402 թ. թոյլ տուեց իւր պետութեան մէջ անարգել առուտուր ա-

նեկ, իսկ Վլադիսլաւ դ. 1641 թուին բաւոր մաքսերից ու տուրքերից ազատեց:

Վլադիսլաւ ա. օրով 1402 թուին Լեհաստանի հայ վաճառականները միայն կարապետներ էին դէպ ի Լեհաստան գաղթականութեան, իսկ Վլադիսլաւ դ. ի օրով 1641 թուին հայ գաղթականութիւնը տարածուել էր Լեհաստանի հարաւային ծայրերկրում և բազմացել այնքան, որ յատուկ կախսկոպոսական ամբոս ունէր Գալիցիայի Իլլով քաղաքում, հաստատուում 1364 թուին. իսկ Իլլովը միացրեց Լեհաստանին լեհաց Կազիմիր մեծը:

Հայերը լեհաց իշխանութեան տակ մինչև ժէ դարը աւանգապահ հայ-քրիստոնեայ էին և Հռոմի ճանապարհը չէին սովորել:

Նիկիոյ Թորոսովիչի ձեռնադրուելովը 1623 թուին սկսում է հայերի չարաբախտ դարձի պատմութիւնը և հայ հոգևորականներն ու աշխարհականները մէկը պաշտպանութիւն գտնելու և միւսը բողոքելու համար սկսում են ճանաչել Հռոմի ճանապարհը: Իսկ Ռուս պրաւոսլաւ իշխանութեան տակ հայք արդէն Հռոմ գիմելու կարիք չունէին:

Վենետիկի օրինակը Դերձանեանը համարում էր Հայոց ՉԳԹ. և Փրկչի 1350 թուին դրւում, սակայն մագիստրոս Մեսրոպ վրդ-ի (այժմ կախսկոպոս) ճշտադոյն հետազօտութեամբ և յիշատակարանի ընդօրինակութեամբ երևում է, որ վենետիկեանը Դերձանի օրինակը չէ, այլ նրանից արտագրւում հայոց ՌՄԸ և Փրկչի 1758 թուին և սխալմամբ համարուել է բնագիր, նոյնը կարելի է և Պարիզեան օրինակի համար ենթադրել, որի մէջ բնագրի թիւը համարւում է զույգ ընդօրինակութեան թիւ, իսկ այս ընդօրինակութիւնը կատարւած է Հռոմում Վարդան քահանայի ձեռքով, որ ուսական կամ պաւսնական ոճով Հռոմը Ռիմ է գրել: Եւ այս տեսակ ընդօրինակութիւն կարող էր տեղի ունենալ ժէ. դարում, որովհետեւ այդ ժամանակ յայտնի են երկու Վարդաններ—մէկը Վարդան Յունանեան, ծառայոցի (Հռոմի պրօպականդայի) աշակերտ, որ 1681 թուին կախսկոպոս ձեռնադրուեց ու վարեց իւր պաշտօնը մինչև 1715 թիւը, իբրեւ Նիկիոյի յաջորդ: Սրա համար հանգուցեալ է. Եղեանը (Բոնի միութիւն լթ.) ասում է. «Բայց ի բաց հերձուալ անջատեցաւ յԱթոսոյն Ս. Էջմիածնի»:

Միւս Վարդանը հայ կրօնաւոր քահանայ, ըստ Պրդուի 1665 թուին յուլիսի 23-ին հասնում է Վալախիա, «Որ համարէր կաթոլիկ զի ի Հռոմ քաղաքի այնպէս երևէր, այլ արգեամբ հաւաստեալ էր այր ճարտար յոյժ, որպէս և աստ ի Վալախիա և այլ տեղիս... Ամօք երկու յառաջ մեկնեցաւ աստի ի Հայաստան, առեալ ընդ իւր սակաւ արծաթ. այլ ի ճանապարհի անդ սղանաւ ի ձեռն աւաղակաց», (Բոնի միութիւն երես 45): Ի նկատի ունենալով, որ Պրդուի

ժամանակագրութիւնը հասնում է մինչև 1669 թիւը, դրանից երկու տարի առաջը 1667 թուին է. ուրեմն այս թուին էլ սպանուել է Վարդան հայ կրօնաւոր քահանան:

Ըստ մեզ այս Վարդանը կարող էր պարիզեան օրինակի գրիչը լինել, և որպէս մարդ, որ «յամենայն ժամու յարէ ի կողմն հօրապոյնին» հօրապոյն կաթողիկոսներին հաճոյանալու համար սլաւոնական ոճով Հռոմը Ռիմ է գրել: Եւ այս այն ժամանակ միայն, երբ ստուգուելի, որ Ռիմը հաւաստեալ Հռոմն է և գրչութեան թուակաշի վերաբերութեամբ տարակուսութիւնները վերանան:

Մեր այս ենթադրութիւնը առաջ բերելով պարիզեան օրինակի վերայ, ցանկանում ենք, որ ճշտուել այդ օրինակի գրչութեան հանգամանքն ու ժամանակը. այս բանը կարող է լինել յիշատակարանի լուսանկարչական հրատարակութեամբ:

Յիշատակարանի մէջ յիշուած «հոգևորներ» բառն էլ հնութեան կնիք չէ կրում: Ազաթանգեղոսի երրորդ տպագրութիւնը եղել է վենետիկում 1835 թուին պարիզեան օրինակից, ուրեմն այդ օրինակը իւր յիշատակարանով յայտնի պէտք է լինէր Հայկազեան Բազմոցի կաղնուղներին, այդ բառը չկայ բառագրքում, որ տպուել է 1837 թուին, այսինքն Ազաթանգեղոսի յիշեալ տպագրութիւնից երկու տարի յետոյ:

Ազաթանգեղոսի առաջին ձեռագիր համարուած օրինակի մասին մեր տարակուսութիւնը իբրեւ ենթադրութիւն յայտնելուց յետոյ զանք երկրորդ հնագոյն օրինակ համարուածին:

Երկրորդ հնագոյն օրինակը գրուած է Դերձանում Հայոց Չղթ, և փկչի 1350 թուին:

«Այս ձեռագիրն, ասում են բազմատոգները, ունի արդէն Սեղբնտրոս ընթերցուածը փոխանակ Եւսեբիոսի Ուրեմն մեզ յայտնի հնագոյն օրանակն է «Սեղբնտրոս» ընթերցուածով. թէ Ա. և թէ Բ. օրինակներում չկայ «Դաշանց թուղթը»:

Այս Բ. օրինակը ըստ բազմատոգների (յառաջարան եր. իւր., և թէ ուրիշ չէ, պէտք է համարել ոչ թէ Դերձանի օրինակը գրուած 1350 թ. փ. այլ այդ օրինակից արտագրուած Հայոց ՌՄԸ—Փըրկչի 1759 թուին. այսինքն Ազաթանգեղոսի առաջին տպագրութիւնից 50 տարի յետոյ: Վենետիկեան այս ձեռագիրը ցուցակագրել և յիշատակարանը արտագրել է Մայր Աթոռի միաբան Մեսրոպ վարդապետը, ինչպէս վերն ասացինք. այդ արտագրութիւնը ասում է. «Ի թուին ՌՄԸ. հոկտեմբերի 20 (փրկ. 1759) Ազաթանգեղոս օրինակեալ ուղղագրեցաւ ի Հաղբատ ի գրչագիր օրինակէ ինչ, որ էր գրեալ ի թուին Հայոց Չղթ. (փրկ. 1350) ի Դերձան գաւառի, որ հույ է քաղաքն Կարնոյ»: Կայ արդեօք այժմ վենետիկում Դերձանի օրինակը, թէ միայն նրա ընդօրինակութիւնն է. «Միսիթար»

եաններին է մնում այս մութ կէտը պարզել», իրաւացի կերպով ասում են բաղդատողները: Իսկ մենք կաւկասյեանք նոյն, միաբանութեան է մնում պարզել պարիզեան օրինակի մասին մեր տարակուսութիւնները, որովհետեւ այդ օրինակի համեմատ է Վենետիկի ասպին 1835 թուի հրատարակութիւնը:

Եթէ Հաղրատի 1759 թուին արտագրութիւնն է համարուել Դերջանի օրինակ, այն ուրեմն ոչ միայն ըստ հնութեան երկրորդը չէ, այլ ամենանորն է, թէև հնագոյն օրինակից արտագրուած:

Բաղդատողները բոլոր յայտնի ձեռագիր թէ տպագիր Ագաթանգեղոսները երկու զլխաւոր խմբագրութեան բաժանելուց յետոյ արհոււմ են երեք ընտանիքի:

Ա.	Բ.	
	Գ.	Հ.
Բաղէշի (1598)	Արեւիկան (1668—76)	Դիարպեքիբի (1668)

Ագաթանգեղոսի այս գիտնական հրատարակութիւնը հայագէտների և հայագիտութեամբ հետաքրքրուողների համար անհրաժեշտութիւն է. ցանկալի էր, որ անհրաժեշտութիւն դառնար ամեն հայի համար:

Բ.

Պ. X. Кучуко Иоханнсово հրատարակել է ուսերէն երկու տետրակներ, որոնք վերաբերում են Խրէմի հայ հնութիւններին: Армянская надпись Карасубазара: Այս տետրակին կից է Арм. над. въ Θεод:

Հեղինակը անցեալ 1909 թուին ամառը Թէոդոսիայում գտնուելով հետաքրքրուել է այն տեղ եղած 1330 թուին չինուած երկփեղկ հին դանով, որի լուսանկար պատկերը հանել է տուել:

Թէոդոսիայի հնագործների տեսուչ Պ. Ա. П. Колли յայտնում է Պ. Քուչուկին, թէ Խարասուբազարի հայ եկեղեցում եւ կայ երկփեղկ հնագոյն դուռն բերուած որպէս թէ Անիից՝ սկզբում կաթա (Թէոդոսիա) և ապա տեղափոխուած Խարասուբազար. ի յիշատակ նուիրում է այդ դռան լուսանկարը:

1. Ըստ Պ. Քուչուկի Խարասուբազարի այդ երկփեղկ դուռը ըստ երեոյթին ընկուղեայ է և քանդակաւոր: Իւրաքանչիւր փեղկ երեք մասի է բաժանուած և ամեն մի մասում կան երեքական նրբաքանդակ խաչեր՝ խաչքարերի պէս: Շրջանակի վերեւ չորս տող արձահագրութեան տեղ կայ հաղիւ նկատելի արձանագրութեան հետքով:

Պ. Քուչուկը մեծ գժուարութեամբ է կարողացել վերձանել այդ արձանագրութիւնը, որ ունի այս որինակը.

«Ա՞՞ ծարնակ սուրբ տաճարիս դուռն Սմբատի կենաց յարկիս՝ կանգնեալ յանուն սուրբ Ա՞՞ ծածնիս է յիշատակ համօրէն ժողովրդեանս. թվ. ԶկԱ. (—Փրկչի 1513 թ.)։ Իրաւամբ նկատում է Պ. հեղինակը, թէ այդ դուռը Անիից չէր կարող բերուած լինել, քանի որ այդ թուին Անին արդէն ամայացած էր, և դուռը կարող է շինուած լինել Թէոդոսիայում Անիի առձեռն օրինակի համեմատ, որի երկու հասր կան այժմ Թէոդոսիայում, մէկը 1371 թ. Փ. Հայոց Հրեշտակապետաց եկեղեցում, միւսը 1330 թ. Փ. Հնադարանում։ Արձանագրութիւնը ըստ ամենայնի հին ձևն ունի։

2. Армянская надпись въ Θεοδοσίи.

Այն բլրի լանջին, ուր շինուած է Թէոդոսիայի Հնադարանի գեղեցիկ չէնքը, կայ այն տունը, ուր ծնուել է Յովհաննէս Կոնստանտինեան Այրվաղովակին—աշխարհահռչակ ծովանկարիչը։ Ահա այս տան մօտ կայ մի փակ ու լցուած աղբիւր, որ ունի հետեւեալ արձանագրութիւնը.

«Յիշատակ է աղբիւրս խոճա Ա՞՞ ծատուրին և կողակցին Պիքաշային և իւր զաւակաց. Մայրիւմ խաթունիս և Ուլուի Պիքային և իւր ծնոդացն. Պիաթային և Մայրայ խաթուն Սիր Պզունքն Պանաբին Իրվատին Ա՞՞ ծատուրին. թվ. ՌԼԷ.» (—Փրկչի 1588 թ.)։

Այս արձանագրութիւնը արդէն ունի Խրիմի բարբառի հետ և Թաթարական անունների կիրառութիւն.

Պ. X. Кучукъ Иоаннесовъ-ի երկրորդ տետրակը, որի վերնագիրն է

Армянская надпись изъ Симферополя, վերարիւրում է Տաւրիկեան գիւանական գիտական յանձնաժողովի Հնադարանին (Музей Таврической Ученой Архивной Комиссии), ուր կայ մի տապանաքար, որ ունի 2 արշին 1 վերշ. երկայնութիւն, 1 արշին լայնութիւն և $\frac{1}{2}$ արշին թանձրութիւն։ Այդ քարը գտնուած է Սեւաստոպօլից ոչ հեռու Զօրգուն գիւղի մօտ.

Դատելով լուսանկարից, ասում է Պ. Քուչուկը, որ յղել է մեզ Պ. Մարկեվիչը, երեսի կողմից բոլորովին ամբողջ է, բայց կողքից քիչ ձևասոււած։

Վատ պահպանուած լինելով արձանագրութիւնը բաւական ձևասոււած է և գժուարութեամբ է կարգացուած, չորս մասից է կազմուած արձանագրութիւնը։ Բացի լուսանկարից Պ. Քուչուկի ստանալով Պ. Մարկեվիչից այդ արձանագրութեան էստամբաթը. մեծ գժուարութեամբ է վերձանել, որի բոլորովին ճշտութեանը չէ երաշխաւորում։ Ահա այդ արձանագրութիւնը.

ՏԱՊԱՆԳԻՐ ՍԻՄՖԵՐՈՊՈԼԻՅ

(Надгробная надпись из Симферополя.)

1. Այս է հանգստեան տապանաց տեղի Հիմանանի
(Ներսէ)սի (գու)սար Այպեքէի, որդի Քամոսեանայի
. . . . էին. որք մի ամիս զինչ որ կան
. . . . ՚ի տապապի. մի օր ոչ եղև մեզ աւելի
. . . . հարս նազելի որդի ծնել . . ժամանի
. . . . քն. մորմօքեի արու որդիս այս ծնանի
(առաւ)ել զի զԳեորգայ ետ ծնունդն աւուրց,
. . . . ննջողի գստման է հոգ տապանի.

2. Յիշատակ է Յոհ(աննէ)սի
Զարմիցս Խելքնազի
Բայց ես Գերիս . . աստ ոչ էի
Կոստանդինոսի համբաւն առի
Եւ Ղուկասի, որ նոր լսեցի
զԿողակիցն իմ ՚ի տապանի
Հերգալի Սափեստատեոսի
Նմանենաս խելագարի
Նակարի . . . (Սար)գսի
Նարեղեցի . . . Հեղի
Թէպէտ բազումք կան այսպիսի
Բայց Կոգերցիցի
Հրամանն այս է Ամաչի
Դուլիկ Ղոսասիս աղայի
Որն որ ասէր հաշս ե փեսայ
Բաժնի էին Գունեկզի
Ոչ է նման Ալտակի
Ոչ հայր նման . . .
Եւ ոչ սիր(ելիք) . . . եղբ(արք). ոչ բար(եկամք) սորա

Գովելի է պ. Ս. Քուչուկ Յովհաննիսեանի հետաքրքրութիւնը.
հայ գաղթավայրերի հնութիւնների ուսումնասիրութեամբ միայն
կարելի է կազմել և լուսարանել հայ գաղութների պատմութիւնը: